

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար 12
Տարեկան 6
Վճարման և արժեքի մասին

Վերականգնի համար 3
Տարեկան 1.50
Վճարման և արժեքի մասին

Կրթական տարրերի և արհեստների համար 40
Կրթական տարրերի և արհեստների համար 20
Սակերի և արհեստների համար 20

Վաճառի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԻ ԵՒ ՇԱՐԺՈՒՄ ՍՐԵՐԸ

Նամակ եւ դրամ զրկել
Խնայողութեամբ հաս-
կից :

Редакция на въетноке
«Шаржумъ»
Ва ва

Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

Արտատպակութիւն համար
ձեռքի
(20 ԱՄԵՐԻԿԱ)
Պուշկարիոյ համար
ձեռքի

× 15 ԱՄԵՐԻԿԱ ×

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐՆԵՐ

ՍԱԿԵՂՈՆԱՅԻՆԵՐԸ

Այսօր դառն իրողութիւն է որ
Մակեդոնական յեղափոխական
կայմակերպութիւնը երկու մա-
սերի է բաժնվել և փոխանակ մի
Բ. Նովակովի, երկու Բարձրագոյն
կոմիտէի քոյու-թիւն ունի. ու գրան-
ցից անեն մէկը իրեն ազգի օրի-
նաբար, է համարում :

Այս գէշ պէջ էլ գալիս է փա-
տելից որ ամեն մի գործի մէջ
տարբեր մարտնչ վարդիկ կան .
և եթէ գոյք գործը հասնուց է իր
զարգացման որոշ կէտին, ուր
այլ եւս տարբեր մտածող մարդիկ
անկարող են իրար հետ համա-
կերպելով աշխատել—տեղի է ու-
նենում բաժանումը—զըտումը :

Ըստ երեւոյթին բաժանումը
փաստակար է. թշնամին գործում է
միահամուռ և որչափ կարելի է
նրա գէտ միահամուռ ուժերով
պէտք է գուրդ դալ. բայց դժ-
բախտաբար առհասարակ այդ պէս
չէ լինում. թշնամուն տապալելու
ձգտող յեղափոխական տարրերը
իրարից անջատվում են. Եւ այդ
շատ ընկանէ. թշնամին գործում
է միահամուռ, որովհետեւ նա ըմ-
բոսացողներին ճնշելու մի միջոց
ունի և այդ միջոցին կատարե-
լապէս տիրապետում է. իսկ ըմ-
բոսացողները կարծում են որ
տարբեր միջոցներ կան թշնամու
գէտ կաւելու համար. և ամեն մի
ժամը աշխատում է իր կարծած
միջոցը տիրապետող հանդիսաց-
նել, ու գրանցից էլ ծագում են
անհամաձայնութիւնները և վեր-
ջապէս անջատումը :

Այդ անջատումը է մեր կար-
ծիքով, որքան շուտ է տեղի ու-
նենում այնքան լա է. որովհե-
տեւ անջատումը մի տեսակ ան-
խոհասիքի դժբախտութիւն է.
մանաւանդ մտաորակէն զարգա-
ցած յեղափոխական տարրերի
մէջ, և եթէ նա տեղի ունենայ
աւելի վճռողական, ընդհանուր
ապստամբութեան տրամադրու-
թիւնը հասունացած միջոցին, ա-
ւելի քնտասակար, գուցէ և լորս-

տաւեր լինի յեղափոխական
գործի համար :

Մենք սովորենք լսել որ եթէ
մեր յեղափոխական տարրերը
միացած լինէին մինչեւ օրս մենք
շատ, շատ մեծ գործեր կատարած
կը լինէինք. ինչ թվում է աւելի
քիչ, գրեթէ ոչինչ չը պէտք է ա-
րած լինէինք, որովհետեւ մեր ամ
բողջ յեղափոխական տարր կոչ-
վող զանգվածի մէջ յեղափոխա-
կան, բառի բուն իմաստով, շատ
քիչ կայ. և եթէ այդ բոլորը
միացած լինէին, սակաւթիւ յե-
ղափոխականները պիտի խեղդ-
վէին յեղափոխական լոկ անունը
կրող մեծամասնութեան մէջ :

Մեր յեղափոխականները վա-
ղուց է որ իրարից պատված են.
Մակեդոնացիները այսօր են
պատվում, այն փորձանք որ մեր
գլխին եկաւ մի քանի տարի ա-
ռաջ ու մենք աղափուլու վրա
ենք նրա երեւակայական վատ
հետեւանքները. այսօր հանդի-
պում է Մակեդոնացիներին մի
աւելի վտանգաւոր և կրիտիկա-
կան վայրկեանում :

Անջատումը տեղի է ունենում
Մակեդոնացիներին մէջ այն ժա-
մանակ, երբ ընդհանուր ապստամ-
բութեան ժամը մտեցել է, ուր
իսկապէս ուժերի ջլատումը շատ
վտանգաւոր կարող է լինել. իսկ
մեր մէջ անջատումը տեղի ունե-
ցաւ այն միջոցին երբ մենք մեր
յեղափոխական առաջին քայլերն
էինք անում. մեր յեղափոխական
գործից վարանդները և թոյլե-
րը հեռացան ոչ այնքան վտան-
գաւոր րոպէսում :

ՎԱՐԴՈ

ԱՐՏԱՍՏՂԱՆԻ ՅԵՂԱՓՈՒՎԱԿԱՆՆԵՐԻ

Գործի ժամանակ խօսել, ճառել,
քննադատել, և այն էլ հեռուց, դա
մարդկային թուլութիւն, անճար-
կութիւն է. Հեռուց պոստը, դատա-
փետիկ նշանակում է ծովափից ի ելող-
ուղին խրատել թէ այսպէս անի,
այնպէս անի: Խօսելով գործը դառ-
նում է մի տեսակ բանաստեղծութիւն

և հեռանում է իսկական հողից: Մեր
մէջ մի ախտ, մի հրանդութիւն. մի
ստորին յատկութիւն զարգացման
հսկայ քայլեր է առնում. համաճարա-
կի դոյն է ստանում. Դա խօսքի
գործունէութիւնն է. Խօսքի դոր-
ծիչները թիւը սուտարանում է. Եւ
մենք աղճատում ենք ամենաւերա-
կան գործեր. փրանջ սրբազան պար-
տականութիւններով: Եւ կը վերառ-
նեմ մեր գոյութեան սպառնացող
Մարդկեր Գազանի դէմ սկսած կը-
ռււր, որը ժողովրդային է. ընդ-
հանումը :

1894-96ի ծայրայեղ ընկալիւմ
զեռ իսպառ չը մարած, նորից սկը-
սում է ցցել իր արիւնամարաւ ժա-
նիքները: Մուշի կառավարութիւնը
յղացել է կրկին մի հրեչային ծրա-
գիր և երկունքում է, նա պէտք է
ձնի մի կտորած. քիւրտ աչքեթ-
ները էլի պէտք է արքեան անտէր,
անտիրական զոհերի արեամբ: Վա-
պուրականը կանգնել է սարսափաւոր
աղէտի առաջ, Այս է երկրի դրու-
թիւնը. Եւ մենք գիտակցում ենք
այդ, լալիս, ցաւակցում ենք, կեղծ
արտասուքները հեղեղները հոսում են
մեր կողորդիւթի աչքերից, Դէս գէն
ընկած դարման ենք կանչում վախ-
նած, Միջոցեւ, մարդիկ վաղուց
գտել են այդ բալասանը. դիրտ թեան
լուծը թօթափելու միակ միջոցը, ա-
զատութեան ճանապարհը, որը սա-
կայն աստատկով է ծածկւած: Պատ-
մութեան անստան հիմքն է դա.
քնութեան անխորասկզբի օրէնքը.
որը զարեթի ընթացքում գալիս է ար-
եան փոթորիկների միջոց որպէս մի
յամառ ուրական: Դա այն հսկայա-
կան շարժումն է, որին կոչում են
յեղափոխութիւն, սպստամբութիւն
ևւ որին պէտք է գիտն ամեն սարուկ
ազգ որ կամենում է ձեռք բերել իր
մարդկային իրաւունքները, սղա-
տութիւնը, Սակայն գրանք յիմար
բաներ են մեզ համար Այդ ճանա-
պարհով գնացողներին ամեն րոպէ
սպասում է բանտ, աքսոր, տան-
ջանք, կախաղան, մահ. արիւն է
բուրում այն տեղից... Օ՛, գնանք այդ
ճանապարհով, ի՞նչ՛ դժուր ենք.
թէկուզ առաջին քայլափոխին ընկ-
նենք, կորչենք անյիշատակ. այն.
տեղ կեանքը կարծ է եւ անհրապոյր.
փառքը խիստ թանկ, Գնանք «գոր-
ծիքներ» լինենք ուրիշների ձեռ-
քում... Ո՛չ, ո՛չ, չենք կարող, կա-
րող ենք այլ կերպ աւելի օգտակար
լինել. այլ սպարէզում—խօսքի,
թիւթի տապալելը, որ ոչ մի գոնաբ-
րութիւն չեն պահանջում իրապէս,
Մենք կը վերցնենք գրեթէ Եւ կը

գրենք անդու, հարաւ կը բարձրա-
ցնենք, ի՞նչ փոյթ թէ անհեթեթու-
թիւններ են մեր դրամները սրան
կը քննադատենք, երկրորդին վաղ-
կարեկ կանենք մի ուրիշին խաշա-
գող կանանք. մի ուրիշին էլ,
եթէ չենք կարող ուրիշ բան անել,
կը հայնուենք: Եւ այսպէս մի օր ա-
հա ինքներս էլ բարձրացել ենք... մեզ
է յիտում հասարակութիւնը, մեզ
հետ է զբաղվում մի ամբողջ դասա-
կարգը: Ուրեմն հասել ենք մեր նը-
պատակին, այսպէս էլ շարունակենք.
Երկրի պահանջների հանդէպ այս
ծրագիրն ենք պատրաստել: Տեսնու՛մ
էք, որչափ ընկել ենք մենք, ըն-
թերցող. մեր մէջ փչացել է ամեն
բարի յատկութիւն, խեղդուել է ամեն
ազնիւ ձգտում, բարձր հայեացք:
Հասարակութեան շահը նսնամու՛մ է
մեր ազոտտ կրքերի առաջ, որոնք
ղեկավարում են մեզ կեանքի շաղում:
Մենք ստեղծել ենք մի հեղձուցիչ
մթնոլորտ, որի մէջ ընկնող ամեն
ազնիւ զգացմունք թունաւորում,
մեռնում է իսկոյն: Ուրեմն որպիսի՞
վտանգաւոր տարր ենք դարձել, որ-
պիսի՞ ոճրագործներ, կը մտածէք
դուք. սակայն, եւ կասեմ, որ դա
մի շատ ընական երեւոյթ է, որը
յաճախ կրկնում է այսպիսի միջա-
վայրերում: Այդ այնչափ էլ վտան-
գաւոր չէ, ոչ էլ վնասակար ընդհա-
նուր գործին :

Ի՞նչք տեսել էք անշուշտ ստանակ-
ներ, որոնք հէգնում են թշուառի
վիճակը, բամու՛մ նրա վերջին ոյժերը
Եւ գցում նրան լքման, յուսահատու-
թեան գիրկը: Ի՞նչք տեսել էք ան-
շուշտ, թէ ինչպէս մի քանի ճարպիկ
խաբեբաներ հաւաքում են միամիտ
ամբոխի գրոչները, իրանց օտիւնպա-
ղութիւններով, իրանց սկախար-
պութիւններով կամ հրօշքներով:
Եւ ի՞նչ պատճառով պիտի գարմանալ
երբ տեսնում ենք նոյնը մեր մէջ,
մի գաղթական անդուլտ ամբոխի
մէջ որի թուլութիւններից կարո-
ղանում են օգտուել այդ շարագործ
ները: Մի միթիթարական կէս, մի
ուրախաւիթ պարագայ էլ կայ, որը
ջրում է այդ վտանգը, որը բացայայտ
կերպով պարզում է նրա անկարեւո-
րութիւնը: Դա այն հանգամանքն
է, որ նրանք՝ այդ նենգ խաբեբա-
բաները՝ կարող են ձնել ոչ երկրում
կամ երկրի կարեւոր սահմաններում,
այլ արտասահմանում, Գործի կեղբո-
նից հազարաւոր մղոններ հեռի վայ-
րերում, Բոլղարիայում կամ Ասիոյ
կայում, ուր նրանց համար հող կայ:
Մի աւելի միթիթարական կէս եւս
կայ. ժամանակի ընթացքում նրանք

րութիւնները . ըմբոստացողները կարեւորութիւն չունեցան և չը կրցին կառավարութիւնը կասեց- նել իր որոշումէն :

Կառավարութիւնը հիմա մեծ հոգ ունի . կրօնաւորներու զըպ- րոցներէն ելած աշակերտներուն համար ուսուցիչներ , ուսումնա- րաններ պէտք են : և այդ ամե- նը մինչեւ նոր ուսումնական տա- րեզու լը պիտի ըլլայ : Կրթա- կան նախարարը յոյս ունի որ կրօնաւորներու ճիրաններէն կորցած բոլոր աշակերտներն ալ պիտի տեղաւորուին կառավարա- կան հիւն և նոր դպրոցներու մէջ :

Ինչ կուզեն թող ըսեն շաքա- րախօս ազատամիտները , ազատ կրթութեան պաշտպանները , Թրան սան , իր յեղափոխութենէն ի վեր սասնակ արժատական քայլ մը չէր րրած հասարակապետական կազ- մակերպութիւնը հաստատ հիմն- րու վրայ դնելու համար : Մա- տաղ սերունդին դաստիարակու- թիւնը կրօնաւորներու ձեռքէն խելը մեծ յայթանակ մըն է և շատ շնորհատրելի :

ԿԼԾ

Պարսկը գաղթականները կըն- դունի . երկու օրուան մէջ թիֆ- լիզէն հազար հոգի հեռացան , միայն խոնու թպան և արհեստա- ւոր գասակարգն է որ հպատա- կութիւն կընդունի :

Խեղճ Հայաստանցի գիւղացի- ները Հայրենիք կերթան առանց նիւթական միջոցներու . այսնե- ղութիւնը չը բաւեր ուսու պաշ- տենեաներն ալ վախ կուստին ըսե- լով . թուրքը զձեզ պիտի կոտորէ :

Այս օրերս այստեղ լուր տա- րածուեցաւ որ Պայաղիտի մէջ երկու հայ բանտարկեալներ կար- ուեր են . մին Խասթուրցի վար- ժապետը , միւսն ալ Սարգիս անու- նով մէկը :

Երկրէն գէշ լուրեր կուգան , բայց միտիմարական լուրեր ալ կան . յեղափոխականները բաւա- կան ուժեղ դիրք մը գրաւած են երկրին մէջ , և ժողովրդին կող- մէն մեծ համակրանք կը վայե- լեն :

Այդ միտիմարական լուրերն ալ եթէ չըլլան , կեանքը բոլորովին անտանելի պիտի ըլլայ :

Գ.

ալ այդպէս վարձատրուէին : Կը խօսէինք մեր օրուան կեանքի մասին , երբեմն ալ կը խն- րայինք , բայց անդին . իսապե- տին կամուրջին տակը կծկտած էր վերան գլուխ սեւ հագած սգա- լոր կին մը կուլար և տառմները կրճտացնելով կանխէր ու կը հայհոյէր . գեռ չը գրտէինք թէ զո՞վ :

Վերջապէս հետաքրքրուեցաւ , ինձ հետ և ուրիշներ , ու սկսանք հարցնել . ո՞ր կերթաս մայրիկ , ինչի՞ կուլաս . ու նա կը պատաս- խանէր .

« Ինչ առաջնորդ , առաջնորդ , զաւակներս , լաւ է զիս ծովը նե- տէք , քան այդ մասին ինձմէ բացատրութիւն պահանջէք . . . ախ , ինչպէս չը լամ . ախ , Մել- քիսեղէկ եպիսկոպոս , ան էր որ տղաս խաբեց մեծամեծ խոստու- ներով . լրտես կարգեց , այս օ- րին հասցուց :

« Ո՞վ էր տղայ մայրիկ : — Մաքսուտ Առանեանը . քա- նի մը գնդակով սպաննեցին յե- ղափոխականները . մենք գիտե- ինք որ այդպէս պիտի լինի . բայց խաբեցին , խաբեցին . տը- ղաս խաբեցին : Առաջնորդը խա- լեց . աղէկ ես հիմա Պոլիս պի- տի հասնիմ , բնիկիքս գիտեմ :

Մաքսուտի մայր այսպէս կընէր իսկ մենք ալ սկսանք անարգանք կարգալ մօրու քաւոր կնկորդիլու- սի զլխին , որ աղցին հացը ու- տելով մեր ոտխին լրտեսութեան պաշտօն կը կատարէ :

ՀԱՄԱՁԱՍՊ
Սուլինա , 16 օտոստոս 1902

ՀՈՅԿԱԶԵԱՆ ԵՐԿՈՅՈՒ ԿԻՒՍՐԱՆ
Փ. Պոլիս 1902

Կրթարանս իր Գ. Պ. տարեշը- ջանը կը սկսի սեպտեմբեր 2 ին , Բշ. օր : Սոյն վարժարանին ուսման ա- ռարկաներն ընտրուած են ոմեն երկրի Բարձրագոյն վարժարան-

ներու գասընթացքին համեմատ- սակայն մեր բուն նպատակալէտն է «ստոյլ միտք» . «մաքուր բա- րոյականութիւն» և «հաստատուն նկարագիր» : մշակել :

Հայերէնէ և պուլկարերէնէ զատ , Անգլիերէն , Գաղղիերէն և Գերմաներէն լեզուներն ալ կը սովորեցնենք : Այս վերջի երկու լեզուներու , զայնակի ու զձագ- րութեան համար եւրոպայէն (բը- նիկ Զուրիցերիացի) մասնաւոր վարժուհի մը սեպտեմբերի մէջ հաս կը հասնի :

Այս տարի միայն 10 գիշերօ- թիկներու համար տեղ ունինք վարժարանիս մէջ : Գաղղիս պայմաններու նկատմամբ հաճե- ցէք գիմել անօրինին հետեւեալ հասցէով :

Բասթօր Եւրօլուս
Ֆիլիթօրը

ԹԱՏՐՈՆ «ՊՈՐԻՍ»

Հանի Բուսաֆօ
Աւստրիայի Զրջան

ՎԷՍԵԼՈ

Հայ դերասանական խմբին կողմէ Վաղը հինգշաբթի դիշեր ժաւր Զին պիտի ներկայացուի :

Ի ՆՊԱՍՏ
Վ. ՊԱՊԻԵԱՆԻ

ԳԱԹԵՐԻՆ ՀՈՎՈՒԱՐՏ

պատմական քառախաղ 7 արար . Հեղինակուրիս Աղեսուսեր Տիմա Թարգմանութի և Մ Մնակեանի

ԱՊՈՒՇ ԾԱՌԱՆ

Խիստ ծիծաղաշարժ գուշտ 1 արար Պ. Ա. Պէլեանի կողմէ

Պ. Ա. Պէլեան իր հիւանդութե- նէ բժշկուելով ինքը պիտի կատարէ շապուշ ծառային դերը :

ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐԲ

Պ. Գ. Յակոբեանի և Օր. Բոզալիի կողմէ

Պ Ա Լ Է Դ

Օրիորդ Բարսաբէյի կողմէ ԵՒ

ՆԱՍԱԿ ԹԻՖԼԻՉԷՆ

11 օգոստոս 1902

Տան օր առաջ կառավարու- թիւնը այս տեղի գաղթականները մէկ մէկ կանչեց և պատուիրեց որ անցագիր չունեցողները կամ հեռանան , կամ թէ ուսական հպատակութիւն ընդունին : Այս աս օրուան ընթացքին մէջ կա- ռավարութիւնը ամեն կերպ կաշ- խտար գաղթականները համոզել հպատակութիւնը ընդունելու . այնպէս որ ամեն օր ոստիկանա- տաները հայ գաղթականներով լիքն են : Մշեցիկ և վանայ գիւ- ղացիները հպատակութիւն չեն ընդունիր և հարիւրներով կը գրիմեն դէպի Խուրքիա և Պարս- կաստան :

Կամ ազատ եթէ քիչ փախչելով մարդ- կային նեղ բնակարաններ մէջ ապա- սան փնտել . ոչ , չեմ կարող ես այդչափ արգահարելի գտնուիլ : Գրեթէ գոչեց Մաղիկեանը : Կեր- թամ , կերթամ , Հեղինէն , ոգու՛մ է թող գայ . նա խոստացել է գալ , և թէ նա անկեղծ է եղլ ինձ հետ կը գայ , անպատճառ կը գայ . եթէ ոչ , աւելի լաւ : Արդէն կանչում են ինձ . կանչում են գործի , պոքարի . մեծ պայքարի . . .

Մաղիկեանը այս խօսքերը հպու- էր վեցջապրի երբ պատահանի առջեւ կանգնեց մի կնիկ և ուսուսելն լնգւով ասեց .

— Ու՛մ վրա էք բարկացել , պա- րոն . — Դու ես , նասալու . — Այո , պարոն , օրիորդը այս նամակը ուղարկեց . համեցէք , ես շուտով պէտք է վերագրտնամ . ժա-

մանակ չունիմ : Աղախինը նամակը տալով խիղջ անհետացաւ : Մաղիկեանը մտեցաւ սեղանին , զողալով մարդը պատուեց և սկսեց կարգալ :

Սիրելի Մաղիկեան , « Կերթնապէս ծնողքներու հետ խօ- սեցի . նրանք համաձայնում են մեր- ամուսնութեան , միայն այն պարս- գայում , երբ դու համաձայնվես այս- տեղ սպրկու : Իմ կարծիքով աւելի լաւ է որ համաձայնվես : Ամուսնու- նալուց յետոյ մենք ազատ կը լինինք մեր ապրիլու տեղը որոշելու : Բայց քեզ վրա ոչ մի ճնշում չեմ ուզում գործ դնել , Յամանայն դէպս եթէ դու այստեղից մեկնես կ . ես քո յետիւց գալու եմ . ուր որ լինես քեզ պէտք է գտնեմ : Այժմ անկարող եմ գալ , որովհետեւ . մեծ աղուկ եւ փոթորիկներ կը յարձրանան . մայրս

մեղք է , չի դիմանայ այդ անսակ ի- րարանցումների , որոնք նրա կար- ծիքով մեծ ամօթ եւ նախատինք են մեր ընտանիքի համար : Անիծում եմ աշխարհը իր անտեղի , կարծեւոք նախատինքներով եւ ամօ- թով . Բայց ինչ արած , մօրս սիրու- համար , պէտքէ գոնէ առայժմ ընկե- ճվիմ : Կրկնում եմ , իմ կարծիքով աւելի լաւ կը լինի որ յս տարարես թէ այս տեղ պէտք է սպրկես . շատ շատ մի տարի մնանք , ես կչ չեմ սիրում այս քաղաքը . ինձ համար էլ անտանելի է այս միջավայրը » :

Քո Հեղինէ
Մաղիկեանը նամակ կարդալուց յետոյ կրկին սկսեց մտածել : — Խեղճ Հեղինէ , ոչ մի բան քեզ համար կարեւորութիւն չունէր . սի- րային արբեցումի մէջ ամեն խոչնդոտ վերանում էր . պարտաւ էր իսկոյն

և եթ ինձ մօտ գալ , բաժանվել ծը- նողներից . եւ հիմա . հիմա ստասն- վում ես . մօրդ սիրու համար ու- զու՛մ ես փոթորիկներից . իրարանցում- ներից ազատ մնալ , Դու առաջինը եւ վերջինը չես : Այդ տատանումները չունեցող օրիորդները բոլորովին ո- չնչանում , հասարակութեան մէջ ա- մենաայհամարելի անդամներ են հըռ- չակվում . որովհետեւ ընկերական կարողակրպուլթիւնը չի հանդուրժում կնոջ ազատ թոյլեցներին : Այ , ես չեմ մնայ . կերթամ ես , մենակ , կը դա՛ս , կասկածում եմ եւ դրանում . այն ժամանակ երբ ես հետու : սա՛ հե- ոու կը լինեմ . աւելի խոնել կը լի- նես , աւելի պաղ կերպով կը գատես :

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

«Թանձր կը հաղորդեն որ Երևանի Պատրիարքին յայտարարեցին որ Սուլթանը տրամադիր է հայերուն վիճակը մեղմացնելու համար կարգադրութիւն ընել եւ թէ Պատրիարքը և ազգային ժողովները ազգին կողմէն հաւատարմութեան ուղերձ մը մատուցանեն Սուլթանին։

Պատրիարքը պալատէն վերագանձաւով իսկոյն ժողով գումարեր է ուղերձը պատրաստելու համար։

Օրմանեան ինչպէս կերեւի այս անգամ ազէկ հասկցեր է որ ալ իր օյինպագութիւններուն չափը անցաւ, որ հայ ժողովուրդը այլ եւս չի կրնար հանդուրժել իրեն պէս պատրիարքի մը որ բաց ի ինպատո ժողովուրդի բան մը չընելէ։ այլ եւ Պատրիարքաբանը բացարձակ թուրք պաշտօնատուն մը դարձուցեր է որ կը տիրապետէ կաշառակերութիւնը և լրբութիւնը։

— Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան պատուիրակը տեղ հասեր է։

— Էջմիածնայ ճեմարանի վարչութիւնը փոփոխութեան ենթարկուեր է։ Կարապետ վարդապետի փոխարէն տեսուչ կարգուեր է հայագէտ Կարապետ Կոստանեան, նախորդ տեսուչը։

— Կը կարծուի որ այս տարի Պուրկաղի և Տօպրիչի ազգային վարժարանները գոց պիտի մնան ուսուցիչներու պակասութեան պատճառաւ։

— Արփիար Արփիարեան իր «Հայ հանդէս»ին միջոցաւ կրկին հրատարակեց տած է իր խնդիրը սպաննալից ոճով մը։ Հանդէսին երկու թիւերը շատ թոյլ են, վաղէմի փառապանծ գրագէտներու դրիչները շատ ժանգոտած կերեւին։

— Կովկաս գտնուող գաղթականներէն շատերը չեն համաձայնիր ուստի հպատակ ըլլալ և երկիր կամ Պարսկաստան կերթան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Իզմիրի իտալական գաղութը կը պատրաստուի մեծ շքով բնգունել իտալական նաւարածինը որ իզմիր պիտի այցելէ մօտերս։

— Սուլթանի պաշտօնեաներ օր մը կուշտ հաց պիտի ուտեն, որովհետեւ Սուլթան հրամայած է ըստ պաշտօնեաներուն մէկ մէկ ամսական տալ։

— Սուլթանը երկու կով, երկու եղ եւ մէկ զամբիկ փաշայի

մը հետ նուէր զրկեր է վիճելով կայսեր իր մտերիմ բարեկամն է։ Էջը կը պակսի այդ նուէրներուն մէջ։

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ Իզմիրի վալի Քեամիլ փաշային կացութիւնը խախտուած է։ Քենիչները գացեր են Քեամիլին առաջարկուած է Առանայի վալի երթալ։ Քեամիլը մերժած է իր ծերութիւնը պատճառներով և փափագ յայտնած է երթալ Կիպրոս ապրիլ։

Գ Ա Ր Ա Տ Ա Ղ

Սահմանադրութիւն վրայ խաղաղութիւնը վերահաստատուած է։ Ալպանացիները ետ քաշուեր են Գարատաղի տրոստովոր պատուիրակը վերջին ընդհարումին պատճառները կործնէ ճեղքուորները խոտէ պատժելու համար։

ՌՈՒՍԻԱ

Դեր— ծովակալ թիրթովի Պուլիս այցելութիւնը տեղի պիտի ունենայ գեոպանի Պուլիս վերագանձաւուն յետոյ։

Ռուսիա Թուրքիայէն պահանջած է վաճառակապակտն նաւերուն թույլ տրուի նեղուցներէն անցնելու, բայց ոչ պատերազմական, ինչպէս որ լուր տարածուեցաւ։

— Պետական թերթը հրատարակած է կրթական նախարարի մի շրջաբերականը որով կը ջնջուի համալսարան մտնողներու համար գաղտնի տեղեկութիւններ հաւաքելու կարգադրութիւնը։

— Սիպերիոյ մէջ քօլէրան հեղհետէ կը թուլնայ։

Ա Ն Գ Լ Ի Ա

Պօեյր Կօրպարները պիտի վերագանձան Անգլիա և ութ օր պիտի մնան հոն. այդ միջոցին անոնք պիտի տեսակցին Շամպրլէնի հետ, պիտի առաջարկեն որ պօեյրներու ազատակները վերաջինելու համար նշանակած են ընդ միլիոն ոսկու վրայ ուրիշ գումար ալ աւելցնեն, աշխատին որչափ կարելի է շուտ սահմանադրական վարչութիւն մը տալ թրանսպալի։

Վերջուպէս Կօրպարները տրամադրի են սնդիլիական ժողովուրդին դիմել պօեյր կիլիներուն օգնելու։

— Կլաքքովի մէջ Կլաքքօնի համար արձան պիտի կանգնեն։ Արձանը շինուած է քաղաքացիներուն ծախքով. արձանի բացումը տեղի պիտի ունենայ Լօրու Ռօզպէրիկ նախագահութեամբ։

ԳԵՐՄԱՆԻԱ

Դերմանական մամուլը մեծ համակրութեամբ կը խօսի Իտալիոյ թագաւորի այցելութեան մասին։ Ամբողջ աշխարհի մամուլը զբաղած է անով որ Իտալիոյ թագաւորը աւտորիական կայսեր այցելութիւն չը պիտի տայ։

Աւստրիոյ կայսրը մէկդի թողուած է. զանազան բացատրութիւններ կը տրուին Իտալիոյ թագաւորին այս վարմունքին։

Այնու ամենայնիւ երբեակ քաշնակցութիւնը հաստատուն հիմնուր վրայ դրուած կը կարծուի։

Ա Զ Դ

ՀԱՅ ՄԱՍՆԱՆՈՐ ՎԱՐՃԱՐԱՆ

Փ. Պօլիս

Քաղաքիս Հայ Մանուոր Վարժարանի երրորդ տարեշրջանը պիտի սկսի յառաջիկայ սեպտ. 2ին, 12. օր։

Իրենց պաշակները նոր արձանագրել տալ ուզող ծնողներէ կը խնդրուի որ, առաւօտները ժամը 10—12 և երեկոները ժամը 5—7 հաճին զիմել վարժարան, որ կը գտնուի Պուլի. Մայր եկեղեցւոյ դիմաց, «Ուշիթել» քա—Տրուս. պաշտի կից։

Օտար քաղաքներէ եւս աշակերտ կընդունինք ծանօթ ընտանիքներու մէջ զանոնք տեղաւորելու և անոնց վարք ու բարքին վրայ հսկելու հոգը ստանձնելով։ Ռուցչական Մարմին

Հայ Մասնաւոր Վարժարանի Դասնօթ. — Ընդունելութեան պայմաններու և ուսմանց ծրագրի մասին տեղեկութիւններ ստանալու համար, օտար քաղաքներէ զիմել հետեւեալ հասցէին։

Կ. Պոլսի Ինստիտուտի

Տիլիբորլը

ԱՆՁՆԱՍՊԱՆՄԵՌԵԱԼԸ

Ֆրանսայի նշանուոր վեպասներէն Ռընէ աը Բօն-ժէի հեղինակութիւնը եղող, խիստ հետաքրքրաւոր և բարոյալից վէպին

23րդ և 24րդ թերթերը

հրատարակուեցան։

Գիրքը շարաթը երկու թերթ կը հրատարակուի և իւրաքանչիւր թերթը կը ծախուի 5 սանթիմի։ Ամբողջ գիրքը 24-25 թերթերէ պիտի բաղկանայ։

Վառնայի համար բաժնեկին 1 ֆր.։ Ուրիշ քաղաքներու և արտասահմանի համար 1.20։

Վառնայէ դուրս, Պուրկարիոյ և արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարով կը զրկուին։ Գրութի ծախքը հրատարակչին վրայ է։ Դիմել հետեւեալ հասցէին՝ Imprimerie Orientale Onnik Parseghian, Varna.

Դրամի փոխարէն նամակագրուի կը ընդունուի։

ՊԱՏՐԱՍ ՍՈՒՐՃԻ ԿՈՐՄԱՐԱՆ

«Անագօն»

Բրեսլաւսկա վոդոց հրէկաւ

Այսիւրարանուսն Եւրոպայի շրջանը

Ստորագրեալ այսու կողմ յայտարարել որ հաստատութեան մէջ մեծ խնամքով և եւրոպական կատարելագործեալ մեքենաներով կը պատրաստուին ամեն ճաշակի յարմարող սուրճի տեսակներն, որք արուեստական անորակելի խարդախութիւններէ զլուսակար խառնուրդներէ, քրտինքէ և հակառոյշական ազդեցութիւններէ զերծ ըլլալով հանդերձ խիստ զիւրաւատալի գներով կը վաճառուին։

Հաստատութեան այցելող տեսնելով իմ պատրաստութեան եղանակը և լսելով իմ տալիք բացատրութիւններն միանգամ ընդ միշտ պիտի համոզուի որ պատրաստած սուրճերը կը հաւասարին իրենց յատկութիւններէ լրիւ ամենին նրբաճաշակ և խնամոտ ընտանեաց մէջ պատրաստուած սուրճերու մաքրութեան, ինչպէս նաեւ իմ գրքերու չափաւորութիւնը բազմատեսակեան գներով տեսնելու մէջ 1 կամ 1/2 քիլօ սուրճի պարտատեղեան համար զոհուած յոգնութեանց ժամանակի կորուստի և ծախսից հետ ամեն ոք պիտի համոզուի որ հաստատութեան գոյութիւնը իրական տառելութիւն մ'է մաքրութեան խնայողութեան և էանդատութեան տեսակէտով։

Յ. Թօլպիսկանց

ԱՆՈՒՇԱԿԱՆ

ՀԱՅԻ ՀԱՍԱՐ

կամ

Ա. Ա. ԶԿԱՆ ՄԸ ԹԻՇԱՍԱԿԱՐԱՆԸ

Վէպ մը իրական կեանքէ

Մամլոյ տակ

Այս վէպը որ կը պարզանակ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներն, հրատարակութեան և անձնուած է հեղինակին կողմէն և պիտի պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան գրքերու ընծայուելու համար։

Բաժնեկինն է 1 ֆրանք. բոլոր ծախքը հրատարակչին վրայ։

Տպագրութիւնը աւարտելուն գրքերը կը յանձնուին բաժանորդներուն կը նուիրուի «Հայկական կարմիր կոշիկ» ընկերութեան։

Բաժանորդագրութեան համար գիրք մը կեանքէ հասցէին։

Մուրատ Երանոսեան

(Պուրկարիոյ)

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна.